դիտողի ստորակայութիւնը, այլ նաեւ՝ նրանց անմարդա-վայել վիճակին մատնելով, ինքն իր համար դիւրացնում էր միւս քայլը՝ սպանել այդ մարդկային յատկանիշներից պարպուած, տխեղծ արարածին:

Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, գրակա-նութեան եւ յուշագրութեան մէջ շատ են վկայութիւնները կանանց եւ աղջիկների դէմ կատարուած այստեսակ ոճիրների մասին... Իսկ տղամարդի՞կ: Գրականութիւնը լռում կամ հպանցիկ ակնարկով է անցնում դրանց վրայից: Սանդեշ Սիվաքումարան, որ նախկին ՀարաւՍլաւիայի առճակատումների ընթացքում տղամարդկանց վրայ կատարուած սեռային չարչարանքներն է ուսումնասիրել, հաստատում է, թէ սեռային այդ քստմնելի արարքներին ենթարկուած տղամարդը իր տղամարդկութիւնը, իր արժանապատիւ ինքնութիւնը պահելու սիրոյն, չէր կարող խոստովանել: Հենրի Մորգենթաուն նկարագրելով թուրք ոճրագործների ի գործ դրած չարչարանքի միջոցները, մանաւանդ՝ տղամարդկանց վրայ եւ մանաւանդ բանտե-րում, խոստովանում է թէ ինքը չի կարող ամէն ինչ գրել քանի որ դրանք յարմար չեն ամերիկեան մամուլում տպագրուելու համար: Դա իննսուն տարի առաջուայ բարոյական օրինաչափութիւնն էր, որ սակայն ջնջուել է Էդգար Հիլզենրաթի մօտ եւ «Վերջին մտքի հէքեաթը» վէպում իր ամենացնցիչ արտայայտութիւնն է գտել հերոսի սեռային օրգանների վրայ կատարուած բանտային քստմնելի չարչարանքների տեսարաններում:

Այն ինչ որ նկարագրուած կամ ակնարկուած է Հայոց Ցեղասպանութեան գրականութեան մէջ, լիովին համապա-տասխանում է միջազգային շրջանակներում ընդունուած յատուկ զեկոյց-բնութագրումին: Դա խօսում է ժողովուրդ-